ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

«Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ուզում, բայց յեվ մեր հողից, վոչ մի վերշոկ մեր հողից չենք տա վոչ վոքի»: (ՍՏԱԼԻՆ)



# 1913 ԹՎԻ ԶԻՆԱԿՈՉԻԿԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

355.1
Հ-14

Հրատարակություն Լենքաղխորհրդի զինակոչի օժանդակող հանձնաժողովի
1935 թ.

35-Ա
Ca 792
355.1
3-14
1 MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!



«Ուրիշի հողից վոչ մի թիզ չենք ուզում, բայց յեվ մեր հողից, վոչ մի վերշոկ մեր հողից չենք տա վոչ վոքի»։ (ՍՏԱԼԻՆ)

# 1913 ԹՎԻ ԶԻՆԱԿՈՉԻԿԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Հրատարակություն Լենքաղխորհրդի զինակոչին օժանդակող հանձնաժողովի
1935 թ.

29 MAY 2013

40.956

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գլավլիտ № 1122
Տիրաժ 1500
Պատվեր № 828
Հենակետային Տպարան

56369.66



«*Բանվորագյուղացիական Կարմիր բանակը դասակարգային բանակ է. Նա կազմակերպված է Նրա համար, վորպեսզի պահպանի ԽՍՀ Միության ազատությունն ու անկախությունը իմպերիալիստների հարձակումից*»:

*(ՎՈՐՈՇԻԼՈՎ)*

Վորպեսզի պաշտպանենք բանվորների և գյուղացիների իշխանությունն ավազակներից, այսինքն կալվածատերերից ու կապիտալիստներից, մեզ պետք է հզոր Կարմիր բանակ: Ամրակուռ Կարմիր բանակով մենք անհաղթելի յենք։

ԼԵՆԻՆ

# ԶԻՆԱԿՈՉԻԿ, ՅԵՂԻՐ ԶԳԱՍՏ

*Այն զրուցությունը, վորում ընթանում է 1913 թ. ծնված քաղաքացիների զինակոչի նախապատրաստումը, բնութագրվում հետևյալ հատկանշական կողմերով.—*

*— Կապիտալիստական անտեսության քայքայում և անկում, աշխատավոր մասսաների չտեսնված աղքատացում, կապիտալիստական սիստեմի վիթխարի հակասությունների սրում, վորպես օրեցօր աճող*

ընտեսական ճգնաժամի օրգյունք, վորը մղում է բոլոր իմպերիալիստներին դեպի պատերազմ և առաջին հերթին խորհրդային յերկրի դեմ։

Սոցիալիստական շինարարության հսկայական թափը, միլիոնավոր աշխատավոր մասսաների ստեղծագործական ենտուզիազմի չտեսնված վերելքի հիման վրա համամիութենական կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ մեր յերկիրը հետամնաց, փոշիացած, անկուլտուրական գյուղատնտեսական յերկրից վերածվեց առաջավոր մեքենայացված յերկրի, մի հզոր յերկրի, վորը կարող է անհրաժեշտ վայրկյանին խորտակիչ հակահարված տալ նըրանց, ովքեր կփորձեն հարձակվել մեզ վրա։

Կարմիր բանակը հագեցված է բարձր տեխնիկայով, վորը պահանջում է յուրաքանչյուր մարտիկից և հրամանատարից բարձր պատրաստականություն, վորպեսզի ճիշտ օգտագործել այն՝ մարտական պայմաններում։



Այս հատկանշական կողմերից են բըղխում բոլորը՝ այն խոշոր նշանակություն ունեցող պահանջները՝ յուրաքանչյուր զինակոչիկի դասակարգային ընտրության, ֆիզիկական առողջության և ընդհանուր ու ռազմական գրագիտության բնագավառում։

Յուրաքանչյուր զինակոչիկ պետք է լավ հիշի, վոր սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը, դա կյանքի օրենքն է։ Յուրաքանչյուր զորակոչիկ պետք է աչալուրջ հետևի իմպերիալիստների վորոնումներին, անընդհատ սրի բոլշևիկյան զգոնությունը,— լինի միշտ զգաստ խորտակիչ հարված հասցնելու պրոլետարական դիկտատուրայի հայրենիքի թշնամիներին։

«Մենք խաղաղության կողմն ենք ու պաշտպանում ենք խաղաղության գործը, բայց մենք չենք վախենում սպառնալիքներից և պատրաստ ենք հարվածով պատասխանել պատերազմի հրձիգների հարվածին։ Ով խաղաղություն է ցանկանում և ձըգտում է կապեր հաստատել մեզ հետ, նա մեզ մոտ միշտ աջակցություն կգտնի։ Իսկ

նրանք, ովքեր փորձ կանեն հարձակվել մեր յերկրի վրա, կստանան կործանիչ հակահարված, վորպեսզի այսուհետև նրանց համար հրապուրիչ չլինի իրենց խոզի դունչը կոխել մեր խորհրդային բանջարանոցը» (ՍՏԱԼԻՆ)։

## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԻ 1913 Թ. ԶԻՆԱԿՈՉԻԿԸ

1. Յուրաքանչյուր զինակոչիկ արտադրության մեջ և կոլտնտեսական դաշտերում պետք է դառնա լավագույն հարվածային ընդհանուր և ռազմական անգրագիտության վերացման գործում, կատարի ու գերակատարի արտֆինպլանները և իր հարվածային, հերոսական աշխատանքով դառնա օրինակելի, իր հետևից տանելով բոլոր զինակոչիկներին։

2. Ձգտել և հասնել բարձր քաղաքական պատրաստականության, հիմնովին յուրացնել Մարքսիզմի-Լենինիզմի հեղափոխական տեսությունը, անխնա պայքարել բոլշևիկյան կուսակցության գլխավոր գծի համար,— յերկրորդ հնգամյակի պլանների կատարման համար։



3. Կարմիր բանակում սոցիալապես անհարազատ և բարոյապես քայքայված տարրերին տեղ չկա։ Մեր Կարմիր բանակը դասակարգային բանակ է, այդ պատճառով նրա շարքերն են ընդունվում միմիայն աշխատավորները։

Հիշիր, զինակոչիկ, և հետևիր, վոր Կարմիր բանակի շարքերը չկարողանա սողոսկել վոչ մի խորթ տարր։ Կարմիր բանակի շարքերը մտնելու, անարժան զինակոչիկի մասին հայտնիր քաղխորհրդի, շրջգործկոմի զինվորական բաժիններին, հիմնարկության յեռանկյունուն, կուս. կազմակերպչին. գյուղխորհրդի և կոլտնտեսության նախագահին։

Իմացիր, վոր դասակարգային թշնամին գործում է գաղտագողի, նա ձգտում է ներս սողալ ամեն ճեղքից, հատկապես Կարմիր բանակի շարքերը։

Մերկացրու այդպիսի զինակոչիկներին ֆաբրիկագործարանային և կոլտնտեսական թերթերի միջոցով, բանվորական յև կոլտնտեսական լայն ժողովներում։

Զինակոչիկների կոնֆերանսներում, բան

վորակն ու կուլտուրան․ լայն ժողովներում զորակոչիկների ցուցակները քննելիս, նայիր շուրջդ, չկա՞ արդյոք սոցիալապես խորթ զինակոչիկ․ առանց դանդաղելու մերկացրու այդպիսիներին հենց նույն կոնֆերանսում և ժողովում։

Հիշիր, վոր դասակարգային թշնամին, արմատախիլ արված և ԽՍՀՄ-ի յերեսին ցփնված այդ հին մարդիկ խցկվեցին մեր գործարաններն ու ֆաբրիկաները, մեր ձեռնարկներում և առևտրական կազմակերպություններում, յերկաթուղային տրանսպորտի ձեռնարկություններում և գլխավորապես կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում։ Սողոսկեցին ու թագնվեցին նրանք այնտեղ, հագնելով «բանվորի» և «գյուղացու» դիմակ, բացի այդ նրանցից մի քանիսը նույնիսկ խցկվեցին կուսակցության մեջ... Ահա թե ինչու հեղափոխական զգոնությունը հանդիսանում է այն հիմնական վորակը, վորը հատկապես անհրաժեշտ է հիմա բոլշևիկներին (ՍՏԱԼԻՆ)։

Ահա թե ինչու զինակոչիկի հիմնական



խնդիրներից մեկը հանդիսանում է բոլոր միջոցներով ու պարբերաբար մերկացնել դասակարգային թշնամուն, վորը ձգտում է սողոսկել Կարմիր բանակի շարքերը, վորպեսզի սկսի իր վնասարարական, հակախորհրդային աշխատանքը բանակի ներսում։

Յուրաքանչյուր զինակոչիկ պարտավոր է օգնել զինակոչային հանձնաժողովներին դասակարգային թշնամուն հայտնաբերելու գործում։ Յուրաքանչյուր զինակոչիկ պարտավոր է ինքը հայտնաբերել զինակոչի ներկայացողների մեջ դասակարգայնորեն խորթ տարրերին և անհապաղ հայտ-
հանձնաժողովին։
նել զինակոչային

4. Անգրագետ և կիսագրագետ զինակոչիկը պարտավոր է կանոնավոր հաճախել լիկկայան, վորին կցված է նա գրանցման ժամանակ, և ձգտի, վոր ամենակարճ ժամանակամիջոցում վերացնի իր անգրագիտու-
կիսագրագիտությունը՝
թյունն ու

ՀԻՇԻՐ, վոր անգրագիտությունը վերացնելուց խուսափող զինակոչիկը չի կարող Կարմիր բանակին արժանի կինվոր լի-

նել։ Դրանով նա թուլացնում է Կարմիր բանակի մարտունակությունը։

Յուրաքանչյուր զինակոչիկ իր վրա կրում է բարոյական պատասխանատվություն ֆաբրիկայում—գործարանում, կոլտնտեսությունում անգրագետ և կիսագրագետ զինակոչիկ ունենալու համար։ ՔՈ ԽԸՆԴԻՐՆ Է ՊԱՅՔԱՐԵԼ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓՈՂՆԵՐԻ ԴԵՄ։

Մինչև Բ.Գ.Կ.Բ. շարքերը զորակոչվելը դու պարտավոր ես վերացնել քո անգրագիտությունն ու կիսագրագիտությունը և գրագետ մտնել բանակ։

ԱՅԴ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ ՔԵԶԱՆԻՑ ՄԵՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔՆ ՈՒ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ։

ԱՆԳՐԱԳԵՏ ՈՒ ԿԻՍԱԳՐԱԳԵՏ ԶԻՆԱԿՈՉԻԿԸ ԳՑՈՒՄ Է Կ. Բ. ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ։

5. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՖԻԶԻՔԱՊԵՍ ԱՌՈՂՋ և ԼԱՎ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԱՐՏԻԿՆԵՐ։ Յուրաքանչյուր զինակոչիկ, որպեսզի լինի առողջ, պետք է կանոնա-



վոր և իր ժամանակին հաճախի այն բժշկական հիմնարկությունը, որին նա կցված է գրանցման ժամանակ բժ. հանձնաժողովի կողմից։ Հիվանդության դեպքում անհապաղ դիմել բուժ. հիմնարկներին բուժվելու համար։

Ստացած բժշկական քարտը խնամքով պահիր, մի կորցնի և հետևիր, որ նրա մեջ գրվեն բուժման ընթացքի մասին բժշկի բոլոր դիտողությունները։

ՊԱՅՔԱՐԻՐ ԱՅՆ ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԴԵՄ, ՈՐՈՆՔ ԽՈՒՍԱՓՈՒՄ ԵՆ ԲԺԸՇԿՎԵԼՈՒՑ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՐՍԱՎԱՆՔԻ ՅԵՆԹԱՐԿԻՐ ԱՅԴՊԻՍԻՆԵՐԻՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ և ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ։

Տիֆի և ծաղկի դեմ սրսկումները կատարիր ժամանակին։

ԱՇՆԱՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱ ԱՄՐԱԿԱԶՄ, ԱՌՈՂՋ և ՑԵՐԻՑԱՍԱՐԴ ՀԱՄԱԼՐՈՒՄ։

6. Յուրաքանչյուր զինակոչիկ պարտադիր կերպով պետք է լինի ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳ։ Դրա համար նա պարտավոր է օգտագործել իր մինչ զինակոչային

պատրաստման կանչած բոլոր ժամանակը Պաջը-Ավիաքիմի վարժկայանում, այնպես վոր կարճ ժամանակում սովորի դիպուկ կրակել, դառնալ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ հրաձիգ և կրակել ինչպես ՎՈՐՈՇԻԼՈՎՆ է կրակում։

Գերազանց ուսումնասիրիր հրացանն ու գնդացիրը և միայն այդ դեպքում կը դառնաս գերազանց հրաձիգ։

ՊԱԳ-ի նորմաների հանձնումը պետք է դառնա զինակոչիկի ամենօրյա խնդիրը։

Յեղիր նախաձեռնող, կազմակերպիր խմբակներ զինակոչիկներից, օրինակ դարձիր քո հարվածային աշխատանքով և մասնակցությամբ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ։ Ակտիվ մասնակցիր ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ բջիջի աշխատանքներին, ՊԱԳ-ի և ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ հրաձիգների նորմաների հանձնման աշխատանքներին։

7. Մինչզինակոչային պատրաստման պարապմունքների ընթացքում աշխատիր լինել կարգապահ և օրինակելի մարտիկ։ Պայքարիր ռազմական պատրաստության բարձր վորակի համար։ Ժամանակը կարճ



է, աշխատիր յուրացնել վողջ ծրագիրը միմիայն գերազանց։

8. Կանոնավոր և ժամանակին ներկայացիր ինչպես քաղխորհրդի և շրջգործկոմի զին. հաշվառման սեղանի, նույնպես և Ռազմական Կոմիսարիատի բոլոր կանչերին։ Հարգելի պատճառով բացակայելու դեպքում անհապաղ հայտնիր զին. հաշվառման որգաններին հիմնարկ-ձեռնարկների կամ ծնողների միջոցով։

9. Արտոնություն ստանալու համար իր ժամանակին զին. հաշվառման որգաններին ներկայացրու փաստաթղթեր քո ընտանիքի կազմի մասին, առանց վորի զինակոչից արտոնություն չես ստանա և բանակ գնալու դեպքում քո ընտանիքը կդրվի ծանըր պայմանների մեջ։ Յեթե փաստաթղթեր ներկայացնելուց հետո ընտանիքի կազմում կատարվում է վորևէ փոփոխություն, ապա անմիջապես պետք է այդ մասին հայտնել զին. հաշվառման որգաններին։

Բացի այդ, յուրաքանչյուր զինակոչիկ իրավունք ունի բանավոր թե գրավոր

հայտնել զինակոչային հանձնաժողովին իր նկատած սխալների մասին իրեն արտոնություն տալու խնդրում։

10. Յուրաքանչյուր զինակոչիկ պարտավոր է ապահովել ինչպես զինակոչիկների կոնֆերանսներին, նույնպես և զինակոչին զինակոչիկների հարյուր տոկոսով ներկայանալը։

## ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵԼ ՌԱԶՄԱԿԱՆ ԴԸՊՐՈՑ

*Ռազմական դպրոցները հանդիսանում* են Կարմիր բանակի պրոլետարական հրամանատարների դարբնոց։

Ռազմական դպրոցների խնդիրն է,-տալ Կարմիր-բանակին պրոլետարական հեղափոխության գործին անսահմանորեն նվիրված, մարքս-լենինյան տեսությամբ զինված հրամանատարներ, վորոնք ունեն ուժեղ կամք և ինքնագործունեություն, անդրդվելի համառություն ու հաստատակամություն մարտական տեխնիկայի տիրապետման գործում։

*Յուրաքանչյուր աշխատավոր յերիտասարդ, վորի 18 տարին լրանում է, կարող*



*և ընդունվել իր ցանկացած ռազմական դըպրոցը՝*

*1935 թ. ռազմական դպրոցներն ընդունվելու իրավունք ունեն 1913-ից 1917 թ. ծնված քաղաքացիները։ Դպրոց ընդունվել կարող են միմիայն բանվոր, աշխատավոր և կոլտնտեսական լավագույն հարվածայինները, վորոնք տեղական կուսակցական, կոմյերիտական, խորհրդային և պրոֆ. կազմակերպությունների կողմից ստանում են լավագույն գնահատական և բնութագիր։*

*Ռազմական դպրոց ընդունվել ցանկացողները պարտավոր են ներկայացնել գիմում և համապատասխան փաստաթղթեր գործարանի կամ ֆաբրիկայի հերթական զինակոչին ոժանդակող հանձնաժողովին, կուս. կազմակերպչին, տեղկոմին, իսկ կոլտնտեսություններում,— կոլտնտվարչության նախագահին կամ գյուղխորհրդի նախագահին.—նաև անմիջապես ռազմական կոմիսարիատ։*

*Ռազմական դպրոց ընդունվել ցանկացող յուրաքանչյուր զինակոչիկ պարտավոր է դիմումի հետ կցել հետևյալ փաստաթղթերը.—*

ИНСТИТУТА
ՀՍՍՌ Арм. ССР

1) Ծննդյան վկայական կամ պասպորտը։

2) Մանրամասն ինքնակենսագրություն.

3) Վկայական առողջության մասին.

4) Տեղեկանք դատված չլինելու մասին.

5) Բնութագիր կուս. և ԼԿՅԵՄ կազմակերպությունների կողմից.

6) Վկայական գյուղխորհրդից, շրջգործկոմից կամ քաղխորհրդից դիմողի կամ նրա ծնողների ընտրական ձայնի իրավունքից ոգտվելու մասին.

7) Վկայական կրթության մասին։

## ՌԱԶՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՆ ՈՒՆԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՃՅՈՒՂԵՐԸ.—

1. Հետևակային, 2. հրետանային, 3. հեծյալ, 4. ռազմա-ճարտարապետական, 5. կապի դպրոցներ, 6. տեխնիկա-հրետանային, 7. զինատեխնիկական, 8. զրահատանկային, 9. ռազմաօդային և 10. ռազմածովային։

Յուրաքանչյուր զինակոչիկ կարող է ընդունվել իր ցանկացած ճյուղերից մեկում



յեթե միայն նրա առողջության պայմաննե-րը կհամապատասխանեն տվյալ դպրոցի պայմաններին։

Դիմում տվող յուրաքանչյուր քաղաքացի աշնանը, հերթական զինակոչի ժամանակ, պարտադիր կերպով պետք է անցնի բժշկական հանձնաժողովով, վորից հետո բոլոր ընդունվածները կուղարկվեն կադրային զորամաս, վորտեղ նրանք պարտավոր են անցնել կրտսեր հրամանատարական կազմի ուսման կուրսը և այդ բոլորից հետո միայն կուղարկվեն ռազմական դպրոց սովորելու։

Ռազմական դպրոցներն ընդունվողի համար պարտադիր է ռուսերեն լեզվին տիրապետելը։

Ռազմական դպրոցն ավարտողն իրավունք ունի ընդունվելու ռազմական ակադեմիա։

Յուրաքանչյուր զինակոչիկ պետք է ձգտի դառնալ կարմիր-բանակի հրամանատար Խորհրդային Միության և ամբողջ աշխարհի աշխատավորների հպարտությամբ ու փայլով պատված։

*Զինակոչիկ, հիշիր, վոր ռազմական դպրոց պետք է մտնեն ամենալավագույն հարվածայինները։ Դրա համար քո խնդիրն է, յեթե համոզված ես, վոր ընդունվողն արժանի չե Կարմիր բանակի հրամանատարի կոչմանը, գրավոր կամ բանավոր հայտնել զինակոչային հանձնաժողովին քո տարակությունը։*

Սոցիալիստական հայրենիքի լավագույն զավակները պետք է դառնան կարմիր հրամանատարներ։



ՀՀ Ազգային գրադարան
NL0206928

40.956

ԳԻՆԸ Է 20 ԿՈՊԵԿ

Լենինգրադի տպարան պատվեր № 326